№ 3 (83) VIII ՏԱՐԻ 31 ՄԱՐՏ 1898

"Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse :
Rédaction du "Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ՀԱՅԱՁԻՆՁ „ԽԱՂԱՂՈՒԹԻՆԸ“

—o—

Ուշի ուշով կարդացէք մեր ընկերոջ սրտառուչ տեղեկագիրը Տարօնոյ և շրջակայքի մասին. նա այլևս չի գուժում աղետաբեր անակնկալներ, չի նկարագրում խմբական ահռելի ջարդեր — ո՛չ, Տաճկահայաստանը „խաղաղեալ է“... Եւ այժմ այդ երջանիկ խաղաղութեան վայրերից տարբեր ձայներ են հնչւում, տարբեր շղթաների ու սրերի շառաչիւն... Հարկահանութիւն, հարստահարութիւն, կօռ ու բէգեար. — առերևոյթս սարսափելի չեն։ Այո՛, սարսափելի չեն դրանք, երբ կատարւում են շա՛տ թէ քիչ բարեկարգ երկրներում, ուր սահմանւում է և յարգւում օրէնքը։ Բայց չմոռանանք, որ Թիւրքիայի մասին է խօսքը, ուր կարգ ու կանոնի տեղ բացարձակ անիշխանութիւն է տիրում, ուր օրինաւորութեան փոխարէն՝ թագաւորում է անսանձ կամայականութիւնը։ Վաղուց ծամծմւած ու հնացած ճշմարտութիւններ... սակայն դեռ քանի՞ցս պիտի կրկնւին նրանք, մինչև որ համոզեն բոլոր կարճատեսներին ու ապիկարներին, որոնք տակաւին օրօրւում են խաբուսիկ երազներով՝ թէ օսմանեան կառավարութիւնը երբ և իցէ կը փորձէ ինքնաբերաբար կարգ մըտցնել այդ անիշխանութեան մէջ։

Տարօնոյ տեղեկագիրը... ամէն մի տողից արիւն ու արտասուք է կաթում։ Երբ կարդում էք, թէ ինչպէս հայ խղճուկ գիւղացին՝ իր ամէն ինչքը յափշտակւած, իր զաւակները մերկ ու անօթի թափառելիս, մատնւում է անվերջ ու չարքաշ աշխատանքի սոսկ օտարների քմահաճոյքին յագուրդ տալու համար. երբ լսում էք, թէ որպիսի հրէշային պայմաններում՝ է կատարւում այդ դժոխային աշխատանքը՝ միացած ծեծի ու բռնութիւնների, անպատուութեան և ամէն տեսակ վայրագութիւնների հետ, որոնք միայն յատուկ են թիւրք պաշտօնեաներին, ակամայ մղւում էք երևակայութեամբ դէպի հինաւուրց գերութեան ժամանակները, երբ մարդկային ամէն արժանապատուութիւն առոչինչ էր համարւում, երբ մարդ-էակը մի անշունչ իր էր հզօր ու բռնակալ իշխողների ձեռքում... „Զազի՛ր ստրուկ, աշխատի՛ր ու տանջի՛ր. յանուն տիրոջ շահի՝ պարտաւոր ես տանջւելու...“ Եւ հլու, անասնական հնազանդութեամբ գործում էր ստրուկը։

Անյիշատակ օրերի այդ քստմնելի գերութիւնը յարութիւն է առել այժմեան Տաճկաստանում, և այն դեռ աւելի յետախաղաց պատկերնով։ Հռօմի կամ Յունաստանի գերին ապրում ու աճում էր ապահով. նրա պատիւն էին բռնաբարում, նրա ամէն մարդկային իրաւունքներն էին ոտնատակ տալիս, բայց նա ապրում էր, և նրա կեանքը չէին յափշտակում։ „Քաղաքակրթւած“ Թիւրքիայի մէջ այդ վերջին արտօնութիւնը ևս խլւած է հայից. „Զազի՛ր գեաւուր, աշխատի՛ր ու տնքա՛, պարտաւոր ես միշտ տնքալու, որովհետև գեաւուր ես։“ Բայց այդ բաւական չէ. դրա վրայ աւելանում է և անագորոյն դատավճիռը՝ „մեռի՛ր գեաւուր...“ Այո՛, հայը նոյն իսկ հնագարեան ստրուկին էլ նախանձելու պատճառ ունի։

Կօռ ու բէգեար անօրինակ բարբարոսութիւններով, առասպելական ձևի հարկահանութիւն, ուր ամէն մի տզրուկ պաշտօնեայ իր բաժինն ունի — և այդ բոլորը մշտենջենաբար, դժբախտ հայրենիքի բոլոր անկիւններում... Ահա՛ մի խարազան, որ աւելի սպառնական ու աղետաբեր է, քան բոլոր ուրիշ խարազանները, քան նոյն իսկ խմբական կոտորածները։ Կտրել, ցամաքեցնել ժողովրդի տնտեսական հասոյթները — ահա՛ ամենաարմատական միջոցը նրան իսպառ բնաջինջ անելու։ Մի տեղ կառավարութիւնն է կեղեքողը, մի այլ տեղ աւելանում են և քիւրդ աւատականները։ Երբե՛ք օրինական գործողութիւն, երբե՛ք մի կաթիլ անգամ անաչառութիւն. Տաճկաստանը ամենայն յամառութեամբ շարունակում է նիրհել մի քաօսային, խառնակ դրութեան մէջ, ուր ցօլանում են և ստրկութիւնն ու ֆէօդալականութիւնը, և միահեծան բռնապետութիւնն ու անսանձ, փաշայական անիշխանութիւնը և մերթ ընդ մերթ նոյնիսկ բացարձակ մարդակերութիւնը։ Տաճկաստանը չի առաջադիմում, նա մնում է թշնամի ու հակառակորդ ամէն բարեփոխումների, և այդպէս կը մնայ յաւէտ, մինչև որ մի արտաքին ուժ, մի փրկարար հոսանք չի ճեղքիլ այդ անշարժութեան կեղևը և չի ոչնչացնիլ Աբդիւլ-Համիդական ներկայ ռէժիմը, որ տակից-գլուխ ներկայացնում է մի կազմակերպւած աւազակութիւն, մի կատարելագործւած սիստէմ թալանի ու կողոպուտի։ Մեր անդրդւելի համոզմունքն է այդ։ Թող,

ով որ կ'ուզէ՝ հայրենիքի դառն կացութիւնը ողբալով և ունայն, խաբուսիկ յոյսերով օգնութիւն աղերսէ մեր արիւնախում թշնամուց. թող, ով որ կ'ուզէ, յեղափոխականներին տիրող չարիքների պատճառ համարէ և, յեղափոխութիւնն անիծելով՝ անցնէ հակայեղափոխականների, կամ „խոհեմ հայրենասէրների" շարքը. թող, ով որ կ'ուզէ, երևեխայաբար հաւատայ, որ Հայաստանում անդորրութիւն է տիրում, երբ այնտեղ չկան ապստամբական շարժումներ։ Մենք վաղուց արհամարհել ենք այդ վտանգաւոր հաւատը, վաղուց հրաժեշտ ենք տուել խաբուսիկ երազներին։ Օսմանեան կառավարութիւնը որոշել է բնաջինջ անել հայ անբաւական տարրը, — ուրեմն ամբողջ օսմանեան հայութիւնը. խնդիրը միայն գործածուած միջոցների մէջ է։ Այո՛, բայց մենք ևս անսասան ենք մեր որոշման մէջ՝ երբէք չդնել մեր սուրը պատեանում, մինչև որ չեն վերանայ անիրաւութիւնն ու բռնութիւնները մեր սգաւոր հայրենիքից, մինչև որ հայաստանցին զուրկ կը մնայ մարդ-քաղաքացու իրաւունքներից։ Եւ տանջուած հայութիւնը այսօր մեզ հետ միասին տոգորուած է մի գերագոյն տենչով՝ լաւ է մեռնել կուելով, քան թէ ապրել տանջելով։

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՏԱՐՕՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

10/22 հոկտեմբեր 1897

Երկար տարիներէ իվեր կողմերս կատարուող խժդժութիւնները պարբերաբար տեղեկագրուած են մեր հայրենաբնակ և օտարաբնակ եղբայրներուն։ Բայց երթալով հայ ժողովրդի վիճակն այնքան կը ծանրանայ, իրար ետևէ անընդհատ կուգան այնքան արտասովոր անցքեր, ճնշման ու ոչնչացման նորանոր միջոցներ, որ կը փութանք ծանօթացնել կողմերուս ներկայ դրութիւնն ու պահանջը, կոչում ընելով արտասահմանի մեր եղբայրներուն որ իրենց լուրջ ուշադրութիւնը դարձնեն դէպ այն բազմատանջ ժողովուրդը, որուն վիճակուած է կարծես միայն սուգն ու տանջանքը։

Այս տարին ալ Մշոյ և շրջակայքի վրայէն կ'անցնի սգով ու սևով։ Տաճիկ կառավարութիւնը վերջնապէս որոշեր է ջնջել ու ոչնչացնել հայ տարրը. . .

Այս ու այն կողմ ծագող խռովայոյզ դէպքերը անմիջապէս ընդհանուր կերպարանք կըստանան. իսլամները բօպէապէս կը պատրաստուին հայերը կոտորելու, սրի ճարակ դարձնելու. որովհետև այդ տեսակ որ և է դէպք մը՝ ուր որ ալ պատահած լինի, Պարսկաստանի սահմաններու մօտ, Թէսալիոյ դաշտը, թէ Մարդասպանին արիւնաներկ պալատին շուրջը, հայերու իսպառ ոչնչացման փողն է, որ կը հնչէ։ Պէտք է խոստովանինք նաև, որ երթալով հայ ժողովրդի տրամադրութիւնը կը լաւանայ, կը կենդանանայ. ոչ թէ ապրիլ շնչելու համար, այլ այս յուսահատ վիճակին վերջ մը տալու համար։ Մարդասպա՛ն Համիդ, հարէմի գաղան, դու չխնայեցիր ոչ մի չարիք մեզ հայերուս. մի խնայեր այսուհետև ևս, մենք կը մեռնինք, կ'ոչնչանանք պատուով, մեր իրաւունքի գիտակցութեամբ. մեր խիղճը հանգիստ է, հոգ չէ թէ մեր դիակները թռչուններու կեր ըլլան, կամ մեր կիներու ու զաւակներու ոսկորներն անթաղ մնան արևու առաջ. մենք հաստատապէս համոզուած ենք, որ մեր կորստով կորսուած ես և դու, ետևէդ թողնելով գարշանքի և յաւիտենական անէծքի յիշատակներ։

Հարստահարութեան նոր միջոցներ։ — Արդէն պարբերաբար կատարուող բարբարոսութիւնները ժողովուրդը հասուցեր են իր վերջին շունչին. միջոց չունի ապրելու այլևս։ Անդուլ տքնող մշեցին միշտ անօթի ու ծարաւ է, մերկ ու բորիկ։ Չէ՞ որ սա այն ժողովուրդն է որ իր անխոնջ աշխատութեամբ կը պահէր սուլթանի սովալուկ զօրքերը, պաշտօնեաները, վայրենի քիւրդը, որոնք հանգիստ նստելէն, ճնշելէն զատ, ուրիշ բանի ընդունակ չեն եղած մինչև հիմա։ Այս տարին Մշոյ հայ ժողովրդին համար աղիտաբեր դարձաւ Տաճիկ կառավարութիւնը երկար-բարակ մտածելէն ետք, գտաւ այնպիսի միջոց մը, որ հայը ստիպի անօթի մնալ, ստիպի տուն-տեղ թողնել հաց մուրալ։

Բարեկարգութեանց ծրագրի յօդուածներէն մէկը միայն գործադրելով՝ հասաւ իր նպատակին. Աստուած տաւ որ այդ ռէֆորմներուն միւս յօդուածները չիրագործեց, ապա թէ ոչ, այժմս հայ անունը չպիտի մնար կողմերս։

Գարնան բացուելուն պէս, երբ հայ երկրագործը կը պատրաստուէր ձմեռուան թմրութենէն ելլել, դաշտ իջնել, աշխատիլ, քրտնիլ ու ապրիլ, յանկարծ ոստիկաններն հասան. — „Ճանապարհ պիտի շինուի, ամէն մէկ գիւղ պարտաւոր է տալ աշխատելու կարող անձեր 15 տարեկանէն սկսած մինչև 60 տարեկան"։ Ամէն գիւղ պէտք է տայ նաև որքան գոմէշ, եզ ու սայլ ունի։ Երանի՜ այն աչքերուն որոնք ականատես չեն եղած այդ դժոխային տանջանքին։ Հարիւրաւոր սայլեր, հազարաւոր հայ երիտասարդներ, վերջապէս ամբողջ դաշտի հայ ազգաբնակութիւնը թափուած է արևու առաջ. կ'աշխատին, արիւն քրտինք կը թափեն մինչև երեկոյ, և գիշերուան զով օդին առանց քրքրած կապերտ մը իսկ ունենալու, կը պառկին խոտերու ու խոնաւ գետնին վրայ։ Այս անտանելի ու բռնութեան տակ եղող աշխատութիւնը, ոստիկաններէն լսած հայհոյութիւնները ու կրած ծեծերն այնքան ծանր չեն, այնչափ դժուար, որքան այդ հազարաւորներու անօթի ու ծարաւ մնալը. արդէն տուներնին հաց չկայ, ստիպուած են գնել շուկայէն, այս ու այն կողմէն, ուտել ու աշխատիլ։ Փոխանակ վարձ մը, դէթ օրական հացի գին մը վճարելու, կառավարութիւնը այդ դժոխային տանջանքին մէջ իրեն համար ոսկոր մը կրծել կը փնտռէ։ Վա՜յ այն գիւղացիին, եթէ ճամբուն վրայ գտնուող ոստիկաններուն, պաշտօնեաներուն՝ ոչխար, իւղ, մածուն, գրամ կաշառք չտայ. չորս օրուան փոխարէն քսանըչորս օր կը զբաղեցնեն. յանկարծ ճամբան կը լայնցնեն, կը նեղցնեն, կրկին քանդել կուտան, կրկին կը շինեն։ Վերջապէս ի՞նչ երկարեմ, երկու տարին ամբողջացաւ, որ տեղիս կառավարութիւնը ձեռնարկեր է այդ ճամբուն շինութեանը, բայց դեռ երկու ժամուայ տարածութիւն առաջ տարած չէ։ Ո՞ւր տանին, եթէ առաջ երթան քանի մը ժամ, կը հասնին Մշոյ և Խնուսի միջավայր և-

ղը լեռները, ուր քրդաբնակ է, ուր Հայ չկայ, ուր չը կայ շահու ու կաշառքներու աղբիւր։ Զէ՞ որ ամէն պարագայի մէջ Հայ տարրը միայն պարտաւոր է աշխատիլ։ Այսպէս, մէկ-երկու ամիս զբաղեցնելով արգելք եղաւ Հայ երկրագործին իր վար ու ցանքն ընելու։ Չգիտեմ թէ ի՞նչ մտադրութեամբ դադրեցուց ճամբու շինութիւնը, սկսաւ այս անգամ Եփրատի վրայ գտնուող կամուրջի շինութիւնը։ Ատ ալ Հայերու բաժինն է, երկու օրւայ հեռաւորութենէ պարտաւոր են քար ու կիր բերել։ Ոստիկանները կը մտնեն Հայ գիւղերը, թէ ի՞նչեր կը կատարուին մարդ և սայլ հաւաքելու համար, կը թողում ուրիշ անգամի, եթէ միջոց ունենամ։ Թերթեր են հարկաւոր։ Վերջապէս այսօր Մշոյ Հայ գիւղացին շնորհիւ սուլթանի ռէֆորմներու իրագործման (՞), զրկուած օրական ապրուստէ, կըսկսի գաղթել դէպի Տիգրանակերտի դաշտերը։ Ո՞վ գիտէ, գուցէ ոչ մէկը այլևս ետ չդառնայ։

Հարկահանութիւն. — Տաճիկ կառավարութիւնը վերը նկարագրած միջոցներով արդէն կիսով չափ հասած է իր նպատակին. ի՞նչ ընէ որ մնացած գիւղացիներն ալ ոչնչանան. ատ ալ դիւրին է։ Հարկահանութիւն, որու ձայնը լսելով Հայ ժողովուրդը սարսափահար՝ անմիջապէս մա՜հ, մա՜հ կը գոռայ. բայց կարծես անգութ մահն ալ սարսռած հեռո՛ւ, հեռո՛ւ կը փախչի։ Հարկահան ոստիկաններն անդադար իրար ետևէ կը հասնին. կը պատահի շատ անգամ, գիւղի մը մէջ քանի մը տեսակ հարկ կը հաւաքի, քանի մը խումբ ոստիկաններ, կանոնաւոր զօրքեր կը լինին։ Հոգ չէ թէ այս կամ այն գիւղացին իր վրայ ծանրացած տեսակ տեսակ ուղղակի կամ անուղղակի հարկերը վճարեր, լրացուցեր է։ Գիւղը գտնուողները պարտաւոր են տալ գաղթականներուն, պանդուխտներուն, սպաննուածներուն և թալանուածներուն յետնեալ տուրքերն ալ։ Այո՛, տալ, բայց հազար երանի՜ եթէ այդպէս կողոպտելէն ետք, թողնէին որ հանգիստ սրտով տրէր։ Իրենք, այդ սովալլուկ գազանները, արտօնուած են մտնելու ամէն տուն, քաշել ամէն ինչ որ տեսնեն, ծեծել, հայհոյել կիներն ու երեխաները։ Ահա այսպիսի յարմար առթի է որ կըսպասեն տաւար, ոչխար գնողներն ալ, որոնք արդէն կապ ունին հարկահաւաք միւտիւրի ու ոստիկաններու հետ։ Եթէ եկ մը հարիւր ղուրուշ կ՚արժէ, անմիջապէս կը ծախուի քառասուն կամ յիսունով։ Հարիւրաւոր անգամ, անձամբ ականատես եղած եմ որ աղքատի մը տան մէջ գտնուած օրական պարէնը քաշեր ու ծախեր են էնչին գներով, ատ ալ այն պահուն, երբ շալկած կը տանի ջրաղաց աղալու և քանի մը օրւայ անօթութիւնը յագեցնելու համար։ Որքա՜ն մայրեր կուլան, որքա՜ն երիտասարդներ ձեռնածալ նստած կը հալին ու կը մաշին, կը մտածեն ու կը խորհին, թէ ահա հասաւ ձմեռը, ի՞նչով ապրին, ի՞նչպէս իրենց գոյութիւնը պահպանեն։ Բայց ո՞վ է Հայ ժողովրդին կարեկից, ո՞վ անոր ձեռնտու. ո՛չ ոք...

Քիւրդերու վայրենութիւնները։ — Այսօր իրողութիւն մըն է արդէն, որ տաճիկ զինուորները քիւրդերուն այլևս ապարեզ չեն տար, անոնք աւելի յաջողակ գտնուեցան թալնելու և կողոպտելու մէջ։ Եթէ քիւրդը անպաշտօն կերպով կը թալնէ և կ՚ոչնչացնէ, ինքը՝ պաշտօնապէս, զինուոր լինելուն համար։

Քիւրդերն արդէն վաղուց հասկցեր ու տեսեր են, որ իրենց ըրած ամէն մէկ չարիքը անպատիժ կը մնայ։ „Համիդիէ“ են, ո՞վ կարող է անոնց վրայ բողոքել։ Այո՛, բողոքել բայց ո՞ւր և ո՞րու. կառավարութեա՞ն, ի՞նչ կատակերգութիւն. չէ՞ որ կառավարութիւնն է Հայ ժողովրդի թէ դատախազը և թէ դատաւորը։

Շարունակ այս ու այն կողմէն լուրեր կը հասնին թէ քիւրդերը այս կամ այն Հայու գիւղը թալնեցին, ոչխարները տարան, և՛ն. և՛ն։ Արդէն այդ բոլորը սովորական է։ Վերջերս սպաննուեցաւ Փ ո ղ ա ր կ ո վ գիւղի մէջ ութսը Թաշոյի եղբայրը Պղտէն. նոյն գիւղէն առևանգուեցաւ Նորահարս կին մը, որուն երիկը քանի մը տարիէ իվեր պանդխտութեան դիմած է։ Սպաննուեցաւ կին մը Աղճ ա ն գիւղացի, Մուշէն վերադարձին դէպի գիւղը։ Սպաննուեցաւ Հայ մը Զ ի ա ր է թ գիւղացի, կաղամբանոցի մէջ։ Վերջապէս ո՞րը յիշեմ և կամ ո՞րը զանց ընեմ. ամէն օր սպանութեան և կամ առևանգութեան լուրեր են որ կը հասնին։ Տաճիկ կառավարութիւնը գիտէ այդ բոլորը ու քմծիծաղով մը կը նայի, գոհ է որ իր կազմակերպած համիդիէ աւազակային խմբերը յաջող կը գործեն։

Սասուն. — Գարնան բացուելուն պէս, ուրիշ տարիներէ աւելի բազմութեամբ, քիւրդ աշիրաթները լեցուեցան Սասնոյ լեռներն ու ձորերը. անշուշտ, ատ ալ ծրագրուած էր սուլթանէն։ Ասոնք ամէն բօպէ առիթներ կը փնտռէին դէպքեր առաջ բերելու, ընդհարումներ ունենալու։ Բացարձակ աւերեցին Կ է լ ի է կ ո ւ զ ա ն ի, Շ է ն ը ք ի ու Ս է մ ա լ ի ցանքերը. բայց սասունցին կարծես խրատուած առաջին դէպքէն՝ լուռ ու մունջ տարաւ, թէև ներքնապէս ակռաները կը կրճտէր և կ՚ըսէր. „Լաւ է մէկ անգամէն կոտորուիլ բոլորովին ոչնչանալ, քան այս վիճակին ենթարկուիլ“։ Բայց կը շարէր բոլորովին, երբ կը մտածէր իր ռազմական ուժի վրայ, իր տնտեսական անկման վրայ։ Չկայ զէնք, չկայ նոյնիսկ վառօդ ու գնդակ, մեռնի՞լ, ի՞նչով և ի՞նչպէս, կրկի՞ն ոչխարի պէս կոտորուի՞լ. ի՞նչ շահ մինչև այսօր պարբերաբար կատարուող կոտորածներէն։ Այո՛, կը խոստովանինք որ միայն մահն է մեր բաժինը, մահն է որ մեր այս անտանելի դրութեան վերջ մը ու լուծում մը կարող է տալ. մեռնինք, բայց գէթ մեր հարիւրի փոխարէն թշնամիէն ևս կորսնցնենք տասը։ Վերջապէս, արդէն աշիրաթի վերադարձի օրերը մօտեցան։

Քիւրդերն իրենց հաշիւները մաքրելէն ետք, տաճիկ կառավարութիւնը շտապեց իրը թէ քիւրդերը վերադարձնել իրենց տեղերը։ Ահա լուր կը հասնի որ քիւրդերը Տալորիկի Սբ ղ ա ն ք գիւղէն խափիրութիւն (պահպանութեան վարձ) կը պահանջեն, հակառակ պարագային կըսպառնան գնալ թալնել ու կողոպտել։

Թողունք մանրամասնութիւնները, այս է Մշոյ և շրջակայքի դրութիւնը։ Սովն ու մերկութիւնը մէկ կողմէն, միւս կողմէն տաճիկ կառավարութեան ու քիւրդերուն խժդժութիւնները, կողմերուս ժողովուրդն օրհասական ճգնաժամի բերած հասուցած են։ Եթէ այս ձմեռն ալ խաղաղ անցնի Հայուն վրայէն հրաշք է. հարկաւ մարդարէ պէտք չէ՝ լինել գուշակելու համար, բայց վտանգը մօտալուտ և փոթորիկը օրհասական է։ Եթէ այդ լիրը Եւրոպան, իր խաբեբայ դիպլոմատներով չի տեսներ դիտմամբ այս բոլորը, եթէ յանուն քրիստոնէութեան ու մարդկութեա՞ն մինչև այսօր ականատես ե-

ղաւ հարիւր հազարաւորներու կորստեան, եթէ սուլթանի արժանաւոր եղբայրակից Վիլհէլմներու շնորհիւ մոռացութեան կը տրուի հազարաւորներու լացն ու կոծը, ճիչն ու աղաղակը, — գէթ թող մեր օտարաբնակ և հայրենաբնակ եղբայրները չմոռնան կողմերուս հայ ժողովուրդը։ Ճգնաժամն է արդէն. ժողովուրդը պատրաստ է կուելով մեռնելու, միայն ԶԷ՛ՆՔ, ԶԷ՛ՆՔ պէտք է իրեն։ Անցեալի տխուր անցքերը արդէն սորվեցուցին իրեն մեռնիլ, պրօպագանդայի պէտք չունի ինքը։ Հայ կինէրու ու երեխաներու, ծերերու ու երիտասարդներու արիւնը 19 ՐԴ դարու իբր թէ լուսաւորեալ մարդկութեան գլխի շուրջը թող մշուշ կապէ, թող անէծք ու լուտանքով յիշեն Մարդասպանին և պաշտօնական Եւրոպայի արարքները. պատմութիւնը պիտի ընէ իր դատաստանը... Միայն թող հիմա մեզ չմոռնան մեր հայ եղբայրները, թող փութան ու հասնին, աջակցին ու օգնեն. այն ատեն մեզ համար գծուած ուղիով կը վազենք հոն ուր միայն է մեր փառքն ու երջանկութիւնը։

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԷՆ

5/17 փետրուար 98

Սուլթանի կառավարութիւնը 1895-96 տարիներուն անխնայ կոտորելով ու հալածելով իր հպատակ հայերը, հայութեան վերջին հարուած մը տալու նպատակով, իր սովորական նենգութեամբ սկսաւ ամէն հնար խորհիլ դրացի ռուս և պարսիկ պետութիւններու մէջ եղած հայերն ալ կասկածելի դարձնելու տեղական իշխանութիւններու աչքին։ Իր բնական գործակներն էին օսմանեան հիւպատոսները՝ իրենց պնակալէզներու վոհմակով։ Բայց չնայած փչող նպաստաւոր քամիին՝ որ ալիք կ'առնէր ռուս խաւարասէր ժամուլի թեւերէն, և հակառակ ռուս կառավարութեան սխալ և եսամոլ քաղաքականութեան դէպի օսմանեան հայերը, — որով հողը բաւական պատրաստ կը թուէր, — այդ դժոխային ծրագիրը յաջողութիւն չգտաւ։ Կարգադրուած էր հրդեհը Կովկասի մայրաքաղաքէն սկսիլ և տարածել դէպի գաւառները։ Թիֆլիզի խորամանկ հիւպատոսը այնպիսի յաջող պրօպագանդա մը ըրած էր, որ 96-ի յունուարին սկիզբները կառավարական բարձր շրջաններն իսկ խաբուած, Դօն-Քիշօտի երևակայութեամբ բռնկած, սկզբան ամէնէն տղայամիտ խօսքերն ու աննշան դէպքերը իբր սկզբնաւորութիւն ընդունիլ հայկական դաւադրութեան մը, որ իբր թէ պայթելու էր ջրօրհնեաց հանդէսին։ Բայց... բայց խնդիրը շատ շուտ պարզուեցաւ, իրեն հետ օսմանեան հիւպատոսի դաւաճան դերը երևան հանելով։ Վերջնիս ծրագիրն էր երկու կողմի մտքերը պղտորել և իրարու դէմ գրգռել, որպէսզի տօն-օրերու մէջ սովորական եղած կինտոյական կռիւ մը շուտով ցեղական գոյն առնէր և սկսէր աւերը։ Աւելորդ է ըսել թէ այն ժամանակ ռուս կառավարութիւնը այնքան բարեհաճ էր դէպի իր ազնիւ դրացին, որ ոչ մէկ իրական քայլ առաւ իսկական յանցաւորը պատժելու կամ արտաքսելու։

Անցեալ տարի ճիշդ այս ատենն էր. Կրէտէն բռնկած էր. յունական պատերազմի նշանները կ'երևային. Թիւրք կառավարութիւնը ինքզինքը մեծ վտանգի մէջ կը զգար. և ահա ռամազանի սուրբ օրերուն մխիթարիչ մոլլաներ եկան Կովկաս, իսլամի պատիւրանները քարոզելու թիւրք գաղթականութեան։ Ատոնք պէտք եղածին պէս քարոզեցին և պատրաստեցին թիւրք ամբոխը. եթէ սուլթանի կառավարութիւնը ջախջախելու ըլլար, տեղական թիւրքերն ալ յանուն իսլամի պիտի կոտորէին բոլոր քրիստոնեաները և իրենց նուիրական պարտքը կատարած պիտի երթային հանգստանալու ճէննէթի հիւրիներուն գիրկը։ Մարդ ակամայ յարգանք կը զգայ դէպի այդ ֆանատիկոսները։ Իրենց դերին մէջ որքա՜ն բարձր են այդ ճերմակ-գլուխները մեր սևագլուխներէն։

Ծովեզրեայ Բաթում, Սուխում-քալէ, Սօչի և այլն քաղաքներու թիւրքերը այնքան ոգևորուած էին որ համարձակ սկսան զէնք գնել, դանակներ սրել և սպառնական խօսքեր արտասանել։ Սակայն այս անգամ բարձրէն եկած խիստ հրամաններ ստիպեցին տեղական թիւրքամոլ իշխանութիւնները անմիջապէս զգուշական միջոցներ ձեռք առնել. Սուխում-քալէէն մօտաւորապէս 150 թիւրք բանուորներ աքսորուեցան և խնդիրը մարեցաւ, մինչև որ յունական պարտութիւնն ալ վրայ հասնելով՝ եկաւ հանգստացնելու թիւրք տարրը և սմքեցնելու անոր սնապարծութիւնը։

Այս լուրջ խնդիրները սակայն հրապարակ չնետուեցան. ռուս մամուլի մեծագոյն մասը, — որ լուն ուղղ շինելու արհեստին մէջ կարող է յաջողութեամբ մրցիլ թիւրք ժամուլ ըսածին հետ, — այս անգամ սուտ խուլ ձևացաւ. կառավարութիւնն ալ խղճի և կրօնի ազատութեան իբր ջերմ պաշտպան (?), հարկ չդատեց խիստ միջոցներ ձեռք առնել թիւրքերու նկատմամբ, որոնք անշուշտ խղճի և կրօնի թելադրութեամբ միայն պիտի գործէին...

Այդ կարգի ընդհանուր ձեռնարկներու մէջ յաջողութիւն չգտնելով, հիւպատոսներն սկսան մասնաւոր անհատներու ինասելու մէջ գոհացում փնտռել։ Իբր փորձ՝ 97 օգոստոսի վերջերը քաղքիս մօտակայ Մախանճաուր թիւրք գիւղին մէջ, — որ հայերու և յոյներու ամառանոցի տեղ կը ծառայէ և ուր այդ տարի օսմանեան հիւպատոսն ալ եկած էր ամառելու, — սոսկալի չարչարանքներով խողխողուեցաւ 5-6 տարեկան հայ մանուկ մը, որուն հարուստ հայրը թիւրքերու կողմէ կը կասկածուէր իբր յեղափոխական։ Դէպքը, ըստ մեզ թրքական բարբարոսութեան շա՛տ սովորական նմուշ մըն էր, սակայն մեծ աղմուկ հանեց թէ կառավարչական և թէ հասարակութեան խաւերուն մէջ, որովհետև հայրը միացած իրեն գաղափարակից տխմարներու հետ սկսաւ պնդել թէ „յեղափոխականներն ըրին“. գիւտը հիանալի էր՝ մանաւանդ տեղական պաշտօնեաներու դիրքը չխախտելու և թրքական մեքենայութիւնները ծածկելու համար։ Մինչև հիմա անցան 5-6 ամիսներ և քննութիւնն ուրտեղն էր, հոն կանգառած է. քանի մը անմեղ բանտարկութիւններ եղան — հարկաւ հայերէն — և գուցէ ասկէ վերջն ալ քանինե՛ր պիտի երթան լցնելու խոնաւ խուցերը։ Փոխանակ թիւրք գիւղը պատասխանատու բռնելու և հանգոյցին ուրկէ ծայր առնելը գտնելու, — որուն օսմանեան հիւպատոսարանի շրջանակին մէջ սկիզբ առնելու հաւաստիքը կայ, — անգամ մը շեղուած իր բնական ուղ-

ղութենէն՝ քննութիւնը սկսեր է տատանիլ և լաբիւրինթոս մը դառնալ, որուն մէջ անվերջ պտոյտներ ու ոլորներ շատ պիտի գործեն հանճարեղ քննիչներ և ինքնաբոյս դիպլոմատներ։

Թէ խնդիրը ի՞նչ ելք պիտի ստանայ և կամ ո՞ր անմեղը պիտի դատապարտի, հոդ չէ խնդիրը. այլ այստեղ անգամ՝ մըն ալ կ՚ուզենք հրապարակաւ շեշտել այն խորին տգիտութիւնը և փաստեր ըմբռնելու անընդունակութիւնը, որ տակաւին հայ ժողովրդի յայտնի մէկ մասին մէջ կը տիրէ։

Հակառակ համաշխարհային համոզմունքին, այդ մասը դեռ չէ կրցած ըմբռնել թէ յեղափոխութիւնը դդու՞մ մի կամ լուբիայի պէս բուսած չէ քանի մը գլուխներէ, այլ իր խորունկ արմատներն ունի ժողովրդի մէջ, իբր արտացոլումը գոյութեան կուի։ Թէ յեղափոխութեան պատճառաւ չեն որ ծագած են թիւրք կառավարութեան կոտորածներն ու ճնշումները, այլ թիւրք կառավարութեան խժդժութիւններէն ու ճնշումներէն. թէ յեղափոխութիւնը բնաւ դադրելիք չունի, քանի չվերնան զինք ստեղծող պայմանները։

Այո՛, ժողովրդի այդ մասը, տարօրինակ յամառութեամբ մը, այսքան փաստերու և այնքան յեղափոխական հերոսութիւններու հանդէպ, հերոսութիւնն՚ը, — որոնք նոր ակնածանք մը ազդեր են օտարներուն և նոյն իսկ կարմիր սուլթանին, — դեռ չ՚ուզեր իր սրտին մէջ համակրանքի տեղ մը տալ յեղափոխութեան և այդ բաւական չէ, ամէն ծանր պարագայի մէջ, չի վարանիր թութակի պէս կրկնել Մեծ-Մարդասպանի խօսքերը. „Յեղափոխականներն են պատճառը“։ Ո՞վ էր ձեզ կոտորողը, ո՞վ էր հազարաւորներ այրողը և մահմէտականացնողը. ըսէ՛ք տեսնենք, ո՞վ էին ձեր կոյս աղջիկները, ձեր հարսներն ու կիները ըլլողները, ո՞վ էին արգանդի մանուկները նիզակներու ծայրն անցուցած վայրենի ուռռա՞ներով խորոված ընողները. և ո՞վ էր վերջապէս օտար աշխարհներու մէջ ձեզ թշուառացնելու և ոչնչացնելու ձգտողը։

Զգե՛նք պատմութեան այդ հրէշային էջերը, որոնք սակայն դեռ անցեալ չեն մեզ համար, մի՞թէ այժմ ալ թիւրքերը դադրած են երեխաներ բռնաբարելէ և թարմ ուժեր խողխողելէ։

Եւ այսչափ միլիոնաւոր, անուրանալի փաստերու դիմաց, դեռ կը գտնուին մարդիկ — հայ անունը կրող — որ իրենց թոյլ կուտան անհեթեթ կարծիքներ ունենալ հայ յեղափոխութեան մասին։

Այո՛, յեղափոխութիւնը եղաւ և պիտի ըլլայ սոսկումը բռնաւորին, անողոք՝ վատերուն նկատմամբ, խիստ՝ անսիրտ-անտարբերներուն, ձաղկող՝ կեղծերուն, արհամարհող՝ ամէն կարգի տիրացուներուն։

Ողորմելինե՛ր, երբ խելքի պիտի գաք վերջապէս...

* * *

Օսմանեան հիւպատոսը այնքան լրբացեր էր իր անպատկառութեան մէջ, որ 5-6 ամիսէ իվեր երկիր վերադարձող հայերուն և նոյն իսկ թիւրքերուն, իբր հաւատարմական երդում, միմօսական ձևերով համբուրել կուտար „Աստուածածին“ մը. վերջերս միայն քաղաքականութիւնը փոխուելով, պոչը ներս քաշեց և այդ պատկերն ալ անյայտացուց։

Յունաց Գէորգ արքայորդու Կրէտէի կառավարիչ ընտրելու ռուսական առաջարկութիւնը այնքան կատղեցուցեր է տեղիս թիւրքերը, որ սկսեր են Մարդասպանին քաջալերական հանրագրեր խրկել, որ ոչ մէկ զիջում չընէ. իրենք ալ պատրաստ են ամէն տեսակ զոհողութիւն ընելու... յոյներու օրօրոցի վերջին մանուկն ալ կոտորելու համար...

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Եւրոպական շքեղ, մայրաքաղաքները ծփում էին արեան գոլորշիների մէջ։ Ժողովուրդներն և նրանց դարաւոր ախոյեանների միջև մի հսկայական մենամարտ էր կատարւում։ Յեղափոխութիւնը պայթել էր Պարիզում և ապա միաժամանակ Վիէննայում, Բէրլինում, Իտալիայում։ Արիւնագոյն դրօշը վեհապանծ ծածանւում էր բռնապետների պալատների առջև, և ազատութեան ծարաւի ամբոխը մոլեգին գրոհ էր տալիս դէպի աջ և ձախ՝ կեցցէ՛ ու մա՛հ աղաղակելով — կեցցէ՛ սահմանադրութիւնն ու ժողովրդական իրաւունքը, անկցի՛ միահեծան բռնապետութիւնը, մա՛հ թագաւորներին ու իշխաններին...

Պանծալի օրեր էին։ Բռնակալութիւնը պատանւում էր և թաղւում առմիշտ, անդառնալի կերպով. ժողովրդական վեհապետութիւնը՝ դարերով արհամարհւած՝ գալիս էր նրա տեղը բռնելու։ Յեղափոխութեան զարկը եկաւ Ֆրանսիայից։ Դիւցազնական Պարիզը արդէն շատ անգամ էր թափ տուել իր առիւծային գլուխը։ Վաղուց նա մահ էր հրատարակել բռնակալութեան դէմ, դեռ անցեալ դարու վերջերին, երբ նա հանդիսաւոր կերպով գլխատեց իր միահեծան պետին։ Բայց յեղափոխութիւնը չաւարտեց իր արիւնոտ շրջանը։ Նոր պետեր եկան ու նախկին ամբարտաւանութեամբ, մտրակը առած՝ նստեցին Ֆրանսիացու գլխին։ Եւ Ռօբէսպիէրների ու Դանտոնների սիրուն հայրենիքը չէր դադարում յեղափոխական կռիւներ մղելուց, նա չէր դադարում արիւնոտուելուց։

Սակայն 1848 թուի փետրուարեան շարժումները, որոնք միանգամ ևս թնդացրին յեղափոխական, ըմբոստ Պարիզը, մի բացառիկ դիրք ունին նորագոյն պատմութեան մէջ։ Յեղափոխութեան ահեղ որոտները տարածուեցին կայծակի արագութեամբ և արձագանգ գտան հարևան երկրներում. Եւրոպան բոցավառուեց, ելեքտրականացաւ։

Ուղիղ 50 տարի առաջ, մարտ ամսի 13-ին Վիէննայի ժողովուրդը բորբոքուած Պարիզի շարժումների լուրերով՝ հրապարակ ելաւ և պահանջեց աւատական կարգերի վերացում, մաքուլի, գումարումների ազատութիւն։ Ցուցումները հանդարտեցին միայն Մէտէրնիխի հեռանալով։ Վերջինս ամէնանենգաւոր դիւանագիտութեան և ինքնակալ միապետութեան նշանաւոր փաստաբաններից էր։ Երկու օր անցած՝ Վիէննա ժամանեց Ունգարական պատգամաւորութիւնը և պահանջեց թագաւորից անկախ մինիստրութիւն Ունգարիայի համար։ Ժողովրդի սպառնական դիրքը ստիպեց աւստրիական միապետին այդ գիջումը ևս անել։ Երկու օր էլ անցած՝ մարտի 17-ին ապստամբեց Միլանը, որ նոյնպէս հեծում էր Աւստրիայի լծի տակ։ Թագաւորը անպատմելի շարման ու սար-

սափի մէջ աճապարեց սահմանադրութիւն հրատարակել: Բայց շուտով պայթեց մի նոր ապստամբութիւն և Թագաւորը ահաբեկուած՝ փախաւ Տիրոլ:

Ապստամբութիւն էր Սիկիլիայում — դարձեալ յանուն սահմանադրութեան. Ժողովուրդը ամէն տեղ դողացնում էր բռնակալներին: Ապստամբութիւն էր Բօհէմիայում, ուր գլուխ էին բարձրացրել չորս միլիօն չեխեր. արիւնահեղ կռիւներ տեղացին ժողովրդի և կառավարութեան զօրքերի միջև: Յաղթւում ու յետ էին նահանջում զօրքերը. տարերքային հոսանքի պէս առաջ էր սլանում կատաղած ամբոխը, ո՞վ էր յանդգնել կանգնեցնել նրան...

Վիէննան ազդանշան տուեց Բէրլինին: Ռամկավարութեան ուրականը այնտեղ ևս բարձրացաւ սպառնալից. պայթեց մի զարհուրելի ճակատամարտ, որ յաւէտ փայլուն կը մնայ յեղափոխական տարեգրութեան մէջ: Կարճ միջոցում Գէրմանիան ևս արեան թատր դարձաւ: Իշխանները այդտեղ էլ շտապեցին տեղի տալ և սահմանադրութիւն „պարգևել“: Ջնջուեց ցէնզուրան, մամուլի, խօսքի, դաւանանքների ազատութիւն յայտարարուեց:

Ամէն տեղ յեղափոխութեան յաղթանակն ենք տեսնում. միմիայն Ֆրանսիայում նա նսեմացաւ անթիւ թանկագին կռուողների անխնայ ջարդերով: Ամբոխը իսկական հերոսն էր այդ ազատարար կռիւների մէջ: Վարձու աշխատաւորներ, տան ծառաներ, ուսանողներ, բեռնակիրներ — սրանք էին յեղափոխական գլխաւոր տարրերը: Նրանք պատնէշներ էին կառուցանում փողոցների մէջ, տների կտուրներից քարէ կարկուտ էին թափում թագաւորական սպառազէն զօրքերի վրայ: Ամբոխի մոլեգնութիւնը չափ ու սահման չունէր. նրա առաջ զարհուրանքով յետ-յետ էին քաշւում զինուորները, և բարձրաձայն հնչւում էր յաղթական ուռա՜ն, անպատմելի խանդավառութեան մէջ ծածանւում էին դրօշակները. կեցցէ՜ սահմանադրութիւնը — զարհուրելի, ցնծագին աղաղակներով ձայնում էր ժողովուրդը...

Այն ինչ թագաւորները՝ զարզանդած այդ վիթխարի ու ահեղ կոչումներից, մի ելք էին որոնում իրենց յանցաւոր գոյութիւնը ազատելու...

1848-ի արիւնոտ թւականը — իրաւամբ կարելի է ասել — սահմանաքարը դրեց ստրկութեան ու ազատութեան, աբսօլիւտիզմի ու ռամկավարութեան միջև բովանդակ Եւրօպայում: 1848 թւի յեղափոխութիւնը ուժգին զարկ տուեց ազգային անկախութեան ձգտումներին Իտալիայում, Ունգարիայում, Գէրմանիայում և Դանուբեան երկրներում: Հին Եւրօպայի խարխուլ շէնքերը փլատակւեցին, իրենց աւերակների տակ թողնելով ֆէօդալական աշխարհի կեղտն ու ապականութիւնը: Բայց ազատութեան գաղափարը լիովին չյաղթանակեց, յեղափոխական գործի շարունակութիւնը ժառանգւեց յետագայ սերունդներին: Եւ սերունդները ապերախտ չեղան: Այսօր ահա նրանք տօնում են ցնծութեամբ 50 տարի առաջ իրենց պապերի ձեռքով կատարուած վսեմ գործի յիսունամեայ տարեդարձը: Եւ արևմտեան Եւրօպան թնդում է ծայրէ ծայր նոյն ոգևորընդոստ կեցցէներով, որոնք դուրս են թռչում համայն աշխատաւոր ընդհանրութեան բերանից, ազատութեան և եղբայրութեան բոլոր անկեղծ բարեկամներից: Հրճւում են այն տարրերը, որոնք միշտ մարտնչող են յանուն առաջդիմութեան ու ժողովրդական բարեկեցութեան, հրճւում են նրանք, տօնելով ու մեծարելով անցեալ քաջ նահատակների խնկելի յիշատակը:

* * *

Տօնե՛նք և մենք: 1848 թւականի ազատութեան նահատակ-հերոսների քաղցր յիշատակը թո՛ղ մեր սրտերում ևս յաւերժանայ: Գնա՛նք նրանց շաւղով, և սովորե՛նք նրանցից մի հիմնական և անհրաժեշտ բան. ազատութիւնը երբե՛ք չեն մուրում, այլ բռնի կերպով յափշտակում են:

ԹԻՒՐՔԻՈՅ ՇՈՒՐՋԸ

Թիւրքան հաւքաւ ընելու ծրագիրը առժամապէս կը մնայ: Տաճկաստանի լրքութիւններուն քոլորտիքը բարձրացած ժխորը ուրիշ բան չեղաւ, այլ տեսակ մը զոռառիմամ՝ ուր մարդիկ իրարմէ բան մը չի հասկցած կը քաշուին:

Բայց այդ տխուր անցքերը լարեցին միջազգային քաղաքականութեան զսպանակները ինչպէս նաև... ախորժակը:

Արեւելեան խնդիրը Ասիոյ շրջանը կընէ հիմա: Եւրոպական Թագաւորները որոնց կշտէն վար, ծնած օրերնէն, աստուած սուր դաշոյն մը կը կախէ, մարդկութիւնը երբեմն երբեմն քաղհանք ընելու համար, Ասիոյ մէկ ծայրէն միւսը ծըռ (course au clocher) կը վազեն: Աշխարհ ահռած կը նայի այդ վեհ ու ընքաղ անգղներուն որոնք „հիւանդ մարդէն“ Չինական դեղին լէշին վրայ կը խուժեն:

Քաղաքակրթութիւնը իրերու առերեւոյթ հանդարտութեան տակ, ընկերային մեծ տագնապ մը կանցնէ այս րօպէիս: Ան պոռնիկ „խաղաղութիւնը“ որ Հայաստանի ու Կրէտէի արիւնոտ դաշտերուն շրջանին ըրաւ, դեռ կը թեւածէ հրետանիներով պատնէշուած մեր հորիզոնին վրայ, հերիք է որ պզտիկ մօծիր մը իյնայ. տիեզերական բռնկումը անխուսափելի է: Փոքրիկ եարաշխարհ մը զուգէ;

Չէ՞ որ քրիստոնէութիւնը „լացի հովիտ“ կանուանէ այս աշխարհը, ուր ցամքի պէտք է թրջել զանի:

Շատ չըներ Գերման կայսրը, որուն ճառերը աստուծով ու յիսուսով քացախախառնուած են, եւ որուն համար մարդկային կեանքը լուի չափ գին չունի, կըսէր „արիւնը պէտք է խաղաղութիւնը ու աշխատանքը պահպանելու համար“: Ճշմարիտ է որ, բռնակալութեան արմատները հը չորնալու համար, արիւնը անհրաժեշտ է:

Արիւնը Հանօթօյին ալ շատ կը պիտնար. իր քաղաքական հնարամտութիւնները մարզելու համար: Երբ հողը կը վառէր հայութեան տաքկրակ արիւնէն, Փրանսայի արտաքին գործերու նախարարը, միակ մարդն էր որ սուլթանի տմարդութիւնը կըսքօղէր: Ռիշլիէօն ժամանակակից Թագուհիին առջեւ խեղկատակօրէն սարսափոտ կը կաքաւէր անոր շնորհները վայելելու համար, զարմանք չէ որ Հանօթօն ալ առատասիրտ խալիֆային դիմաց ըլօշէք խաղար, որովհետեւ

Dans ce bas monde, il faut aimer toutes choses; surtout... le Sultan.

Հանօթօն ակադեմականի անմահութիւնը չըրթելէ առաջ Համիտն անմահացնելու անմահութիւնն ալ ունեցած էր արդէն: Կրկին անմահութիւն...

Ռիշլէօի ծագումը՝ մինչեւ հիմա ճանչցաւ անշուշտ ան „իշու դրախտը“ որ Թիւրքիա կը կոչէ:

* * *

Հայութեան ճիչը, սարերը, ձորերը ու ծովերը պատռտելէ ետքը հազիւ կը հասնէր բթացած Եւրոպայի ականջին, ան ալ զըզզուած ու նուաղկ վիճակի մէջ: Բայց Մակեդոնիան այնպէս չէ. պալքաններու ետեւէն Պուլկարիան ականջ կը դնէ իր եղբայրակիցներու լաց ու կոծին, անոնց յուսահատական աղաղակներուն, եւ իր հրացանը կը պատրաստէ...

Պուլկարիոյ եւ Թիւրքիոյ կապերը շատ պրկած են: Ո՛վ

գիտէ, զարունը Մակէդոնիոյ համար, յաւիտենական զարունի մը բարեգուշակ թեւակոխը ըլլայ թերեւս...

Կրէտէի կացութիւնը մազի չափ փոխուած չէ: Պետութիւնները քանի մը հրաւէր անամօթաբար կը փտտրեն, այնքան ատենայ կը կծրցենն իրարու. եւ պուտ մը ջրին մէջ իրար կը խեղդեն:

Պետութիւնները ոչ միայն ցարդ ներգործական դեր մը չունեցան, այլեւ ունենալու ալ համամէտ չեն:

Թմնի ազդու բացատրութիւնով, „ապիկէ շուներու պէս անշարժ իրարու երես կը նային“ միայն:

Կրէտէն է, ինչ որ էր առաջ: Սուլթան, պաշիպօզուքը, թշուառութիւն եւ Կրէտէ...

Համիտը կը հաւատայ արդեօք թէ ոճիրներով հուն կուլէ իր իրաւապահանջ հպատակներուն հետ: Սուլթանի քէյֆը „այնպէս կուզէ“-ով, չի լսեր կեանքի ու արդարութեան ձայնը: Գիտութեան կատարելագործումներու դարուն մէջ, անպատիժ չէ կարելի խաղալ ազգերու ճակատագրին հետ. որոնք մարդկային անքննաքարելի սրբազան օրէնքով իրենց գոյութիւնը անկախօրէն պաշտպանելու բնական նախաձեռնութիւնը ունին:

Շատ պարզ է...

* * *

Ոսկաններ.— Աշաւոր Ռիշլէօն կը պարծենար ըսելով, „ամէն քան կըսեմ ու յետոյ կարմիր ծիրանիովս կը ծածկեմ“: Նոյն սկզբունքով ըսողներ կան մեր մէջ „ամէն խաղ կը խաղամ ու ետքէն քացազանչութիւններով ազգը կը շլացնեմ“... Նարտասանութիւնը կլլած ատ մարդիկ երբ կեղակարծ թերթերու մէջ իրենց մեղեղին կուզեն երգել, կակղին ծ ա ն ր ա- ծ ա ն ր թախիծներով տքալ: Ազգային դժբախտութեան լուծը կորաքամակ ըրած է ատ հոյակապ գլուխները:

Արգահատանք մը կզգայ մարդ ատ ետ-դարձողներուն համար, որոնք ծառին վրայ կոթը պլորած պտուղի պէս ալ հիւթ չեն ծծեր արմատէն, հապա արեւեղկիկ տաքութեան մէջ խակուած հասունութիւնով մը ամէն քիմքերու զոհացում տալ կը նկրտին: Իրենց յատկանիշը բազմերեսանի ըլլալնէ. կեանքի յեղյեղուկութիւնը, սկեպտութեան ծակծակ տառատոկը նետած է վրանին: Երբ ազգային խնդիրներու վրայ ճառեն, ծուկի պոչով հերոսական մոտածումներ կը յղանան. զիտեն իրենց զգացումներուն մէջ, ամէն տեսակ երակներ հիւսել. ծծումբէն մինչեւ... զառիկը. մանաւանդ երբեմն սրտազեղումի ջրհեղեղներ ունին. կերեւի հայերուն բերանփոխի ճաշակը տալ կուզեն:

Իբր երազահան, քաղաքական ելեւէջներու ատեն, կարող են խորհուրդ հարցնել ազգանուէր թերթին. հոն կը գտնես հայրենասիրական շոինդ, լոհական պատիրաններ, ու յեղափոխութեան դէմ թուքումուր: Վերջապէս սազի թեւաքախումներէ զատ՝ որձեւէգ փիլիսոփայութեան մը խաքուսիկ մտածումները կը գլորտկեն, իրենց ծակծամթի անիւներուն տակ յեղափոխութեան ոսկորները ջարդոտելով...

Սակայն Հայաստանի վրայ սաւառնող ողբեր ու կոծեր մըժացող տաղերուն ու կեղծիկ ծեւապաշտութիւններուն կից, աղու օձի մը կիծը կը ծլլայ:

Դեռ կայ: Յեղափոխութեան ըօղանշին զանգակահարները, ըստ Ս. Գրքին, իրենց հին փսխունքին կը դառնան: Լոելեայն կը հասկցնեն որ սուլթանին խոշոր, շատ խոշոր մ՚եղ՛ա յ ա գ ի ր մը գրելու է, „մենք ըրինք դուն մի ըներ“ ըսելով: Հեռատես պատրւակ մը, լեցուն ապազայի յոյսերով եւ յաջողութիւններով...

Մնկաքոյս քաղաքագէտները, որոնք ատ ապարէգին մասնաւոր պատրաստութիւն մը ունենալ կը թւին, իրենց խիստ նրբազննին քաղաքականութեան չկը միացնեն ազգային պատմական առասպելներուն զգայնիկ սիրտ մը: Որովհետեւ քաջ գիտեն թէ, մեր ազգային զգացումի քնրդին տիրելու համար, անոր պարիսպներուն վրայ Հայկի, Արամի, Տիգրանի անուններով քնացած ջորիներ բարձրացնելու է: Բայց շատ ուշ չէ՞. երեւի դարավերջիկ պաւելինները, եւրօպական հողին վրայ, հայ նախապաշարումները փայփայելու խօլ արշաւէն մղւած, իրենց աձուն հերկելու ի մ ա ս տ ո ւ ն ն ա խ ա տ ե ս ո ւ թ ի ւ ն ը կուզեն ունենալ: Այդքան իմաստակ ու դեղին կեղծաւորութիւն մը, որ կը կանչէ ճշմարտութեան հետապնդութեան դէմ, իբր թէ այսքան զաղափարի համար եւ բռնակալութեան դէմ մարմնչող հերոսները պատմական խաւարի մէջէ ընդունէին ուրուային պատգամներ, չը յիշեցնէ՞ր մարդեր՝ որոնք օձ կլլեր են ու փըսխել կուզեն...

Դաշնակցութեան դէմ մղած իրենց չիւ խաչակրութիւնով, եւ իրերազովութիւններով ազգային փրփրոտ նախանձայոյզները թող ճզնին ոսկեզօծ դեղահատիկներ ջամբել հայ ժողովուրդին եւ աղ ցանել յեղափոխութեան արտին մէջ:

Մենք անվկանդ կը մնանք մեր յեղափոխական կոչումին մէջ, կը շարունակենք աննահանջ կուողի դերը. եւ երբեք կարօտը չենք զգար ղաւաճաններու ծարպիկ ու խորամանկ քաղաքականութեանը. ինչպէս կը յորդորէն փոքրաւոր գրիչներ:

Բայց ի՞նչ ըսես.

„Շատ ցաւի տէր շատ գըուցկան կենդի“ կըսէ մշեցին:

Նախկին Հնչակեան պ. Սօսի Գուգարեանը, ինչպէս յայտնի է, Հնչակեան Կուսակցութիւնից իր հեռանալու պատճառները Թուրքիկ թերթերով պարզելուց յետոյ, ցանկութիւն յայտնեց գործել Դաշնակցութեան մէջ: Բայց որովհետեւ պ. Սօսի Գուգարեանի վրայ ծանրացած էին զանազան ամբաստանութիւններ, հարկ դատեցաւ նախ եւ առաջ հրաւիրել նրան բացատրութեան:

Չնայած որ այդ գործը քննելու ձեռնհաս կօմիտէի կազմած ատեանն անհիմն նկատեց առաջ բերած բոլոր մեղադրանքները, այստեղ-այնտեղ դեռ ես շարունակում են պ. Սօսի Գուգարեանի վրայ ամբաստանութիւններ տեղալ:

Ահա թէ ինչու հրատարակելով ստորեւ պ. Գուգարեանի մեզ ուղղած նամակը, մեր կողմից ես առաջարկում ենք երեւան հանել արդարութիւնը նրա առաջարկած եղանակով:

Այս խնդրի վերաբերեալ գիմումները կարելի է անել խմբագրութեանս միջոցաւ:

„Դրօշակ“-ի առաջիկայ համարում խնդրում եմ տպագրել հետեւեալ երկտողս.

Ցայտնի խմբակներ եւ պարոններ, ինձ վնասելու ուրիշ միջոց չունենալով, խուլ ու մութ անկիւններում միայն զանազան յանցանքների մէջ ինձ զրպարտելու քաջութիւն ունին:

Ընդ-միշտ վերջ տալու համար այդ պարոնների քաջագործութիւններին, հրաւիրում եմ նրանց ընկերական դատարանի առաջ հաստատել իրենց մեղադրանքները: Դատարանը կը կազմւի իմ եւ դատապարտողների համաձայնութեամբ հրաւիրուած անձնաւորութիւններից եւ նրա վճիռները կը հրատարակեն ի գիտութիւն հայ հասարակութեան:

Դատ բանալու համար տալիս եմ երկու ամիս բաւականաչափ ժամանակ. ներկայ գրութեանս տպագրելու օրից հաշւած:

Նախկին Հնչակեան
ՍՕՍԻ ԳՈՒԳԱՐԵԱՆ

ԱԶԴ

Դրօշակի նախորդ համարին մէջ տպւած Դաշնակցութեան Բարիզի կօմիտէի շրջաբերականէն ծանօթ քաջագործ Պիւլպիւլեան անուն մարդուկը, տեսակցութեան մը համար, անուղղակի կերպով Դրօշակի խմբագրութեան դիմում ընելու յանդգնութիւնը ունեցած էր:

Խմբագրութիւնս պատասխանելու ժամավաճառութիւնը թանկ գնահատելով, պարոնը իր ճակատագրին ձգեց:

ՆԻՒԹԱՏԻՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. ԿԵԴՐՕՆԱԿԱՆ ՍՆԴՈՒԿՆ ստացած է.

Ոսկանապատ 1,000 ռուբլի, Կայծիկ 300 ռ., Պէտր. 200 ռ., Ռօստ. 100 ռ..

Ծնթ. -- 1896 թիւ 15-ի Ակռ 82 ռուբլին ուղղել Ակօս 82 ռ.:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ՝

Լօրէնսի Կոմիտէէն (Հ. Ա.) 26 ղօլար 25 սենթ. Ս. Վ.-ի միջոցաւ հանգանակուած 120 ղ. հետեւեալ անձերից. Հրանտ, Հրանոյշ 25-ական ղ., Վաշինգտօն 15 ղ., Արմենուհի, Դորթաւոր, Յոյս 10-ական ղ., Հայրենք, Վրէժ, Վառօղ, Ռումբ, Դժոխք 5-ական ղ.:

Սուլինայէն՝ Համակասպ 10 ֆրանք, Ժընեւէն՝ Հօգաւ 1 ֆր., Ցիւրիխէն՝ Պերճ 2 ֆր.:

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

Դէորգ 183 ու քառորդ դահեկան. Հրահատ խ. 30 ղ., Խլուզիկ խ. 40 ղ., Կապար խ. 50 ղ.:

ՍԱԼՈՅ-ՁՈՐԻ Կեդր. Կոմիտէն՝

Ալոյեան խ. 246 ու կէս դահեկան, Շանթ թիւ 1 խ. 112 ղ., Կայծակ թիւ 1 խ. 41 ղ., Լուսնեակ խ. 260 ղ., Շանթ թիւ 3 խ. 80 ղ., Կարմիր խ. 80 ղ., Սամարիա գիւղէն 353 ու կէս ղ.,

ԿԱԽԱՂԱՆԻ Կեդր. Կոմիտէն՝

Մօսինի խ. 18 դահեկան, Ջրվէժ 20 ղ.: (Զ)

ՏԱՊԱՐԻ Կեդր. Կոմիտէն՝

Յունուար ամսու մուտք. Առաքեալ 108 դահեկան. Սուլիչ շրջ. 45 ղ., Ջրվէժ շրջ. 27 ղ., Հարաւած կոմիտէ 15 ղ., Վրէժ կոմիտէ 70 ղ., Կռուի շրջ. (դեկտ. եւ յունուար) 50 ղ., Ռշտունեաց շրջ. 25 ղ., Պերճ (դեկտ. եւ յունուար) 20 ղ.. Շինական 10 ղ.:

Փետրուար ամսու մուտք. Գեղջուկ շրջ. 20 դահեկան, Սուլիչ շրջ. 35 ղ., Ջրվէժ շրջ. 27 ղ., Կռուի շրջ. 25 ղ., Ռշտունեաց շրջ. 20 ղ.,Պերճ 10 ղ.:

ԿԱՐՄԻՐ-ԲԵՐԴԻ Կոմիտէն՝

1 սեպտեմբեր 1896 -- 15 հոկտեմբեր 1897-ի մուտքը. Ք. 1,000 դահեկան, Մ. մանանաճիւղէն 1,000 ղ., Բաբիլոնէն թիւ 28,585 չէքով 1,000 ղ., թիւ 599՝ 500 ղ., թիւ 553՝ 1,000 ղ., թիւ 552՝ 1,000 ղ., թիւ 551՝ 500 ղ., թիւ 561՝ 300 ղ., թիւ 560՝ 300 ղ., թիւ 562՝ 300 ղ., թիւ 558՝ 200 ղ., թիւ 554՝ 300 ղ., թիւ 563՝ 340 ղ., թիւ 564՝ 300 ղ., թիւ 565՝ 300 ղ.: Համագումար 8,340 դահեկան ոսկեդրամ:

ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏԻ Կոմիտէն՝

Շահէն 5 ռուբլի:

Կարմիր քաղաքէն՝ Ծխավաճառ 1,200 ռուբլի, Ազատութիւն 1,000 ռ., Ազգակից 500 ռ., Մարիամ 450 ռ., Ծերունի 300 ռ., Շամտան 200 ռ., Լուսին, Հայելի, Սիւլիւկճի 150-ական ռ., Հրացան 102 ու կէս ռ., Հայորդի, Բաբի մարդ, Նարդոս, Համակրող, Մոմ, Կրակ, Ազիաթ 100-ական ռ., Հայր Աբրահամ, Պըյրզեան 50-ական ռ., Քամի, Փոթորիկ, Մանուշակ, Մայր Արաքսի 10-ական ռ.: Համագումար 5,042 ու կէս ռուբլի:

Գաղթավայրէն՝ 91-ի հանգանակութեան մնացորդը աւանդապահ Տ. Մ. Մ.-է 200 ռ., Կարմիր գիւղէն Սարգիս Կոտոշեան 100 ռուբլի:

Դաշտ քաղաքէն (1 յուլիս — 31 դեկտեմբեր 1897) ճամբորդներ 26 ռուբլի, Արիւն 18 ռ., Հայասէր 12 ռ., Մշակ 10 ռ., Արգանեան 9 ռ., Եռանդ, Վրէժ, Քուռակ, Արտակ Գնունի, Հայցող, Գարեգին, Դուրգէն, Լոյս, Մազլում, Փափաք 6-ական ռ., Սոխակ եւ Պայրամ 5-ական ռ., Սէրգօ 4 ռ., Մի ոմն 3 ռ., Դրիգոր եւ Լուսն 2-ական ռ., Նիկողայոս 20 կոպէկ, (յունուար եւ փետրուար 1898) Լարդապետ 20 ռ., Ջուր 14 ռ., Հայրիկ, Խորէն, Շահպազ, Ռըշտունի, Թերգիկեան 12-ական ռ., Բազրատունի 11 ռ., 50 կ., Ցօժարական, Կրակ 7-ական ռ., Արիւն 6 ռ., Աշոտ, Շաքար, Սապրի, Անծուէր եղբարք, Յորիկ Վահրամ 5-ական ռ., Հայասէր 4 ռ., Համի, Դէրուիշ 3-ական ռ., Զէյթունցի 2 ռ. 50 կ., Երկւացող, Գարեգին, Գնունի, Եռանդ, Սոխակ, Քուռակ, Վրէժ, Լոյս, Արշակունի, Ծեր, Տասը դարբին, Վիթխար, Դուրգէն, Փափաք, Համբարտար 2-ական ռ., Միսակ, Զաքօս, Կայծակ, Արիստակէս մէյմէկ ռ.: Համագումար 353 ռ. 20 կոպ.:

Աւարայր քաղաքէն՝ Խաչօ Արութիւն 20 ռուբլի, Դալուստ 3 ռ., Ծաղիկ 2 ռ., Գիտուն 1 ռ.:

Սեւ-Ջուրէն՝ Անքախտէն քէրդանկա հրացան մը 150 փամփուշտով, Որսորդէն քէրդանկա հրացան մը 140 փամփուշտով:

Ծնթ. -- 1897 Nr 15-ի Հուր քաղաքի ցուցակին մէջ (1 յունիս --31 օգոստոս) մոռցուած է Ա. Կ., Պէլի Դարա, Ներկարար 3-ական ռուբլի, Սեւան 1 ռ. 50 կ.:

ՈՍԿԵՀԱՆՔԻ Կոմիտէն՝

Բարեսիրտ 480 դահեկան, Ալք եւ Խալիկ 65 ղ., Որսորդաց խ. 52 ղ., Աքլոր ախպար 20 ղ., Անդրանիկ խ. 20 ղ., Կանգուն 10 ղ., Ռուբինեան խ. 10 ղ., Ատեկան եղբարք 10 ղ., Մամիկոնեան խ. 13 ղ., Հեթրա 5 ղ.: Համագումար 685 դահեկան:

„Հուր-Երկաթ" քաղաքէն՝ Քարաժայռ եւ Բազրատունի խումբեր 110 դահեկան, Ռուբինեան խ. 72 ղ., Շարբու, Կամեցող, Լուսին, Ծերունի, Կարմրոտ 10-ական ղ., Պարտէզ 20 ղ.: Համագումար 252 դահեկան:

Ծնթ. -- թիւ 2 (82)-ի Ածխահանքի ցուցակին մէջ մոռցուած էր Վահազն (նոյ. դեկտ. յուն.) 60 դահեկան:

ՊԱԼՔԱՆԵԱՆ Կեդր. Կոմիտէն՝

Ն. քաղաքէն՝ Տիկին Փ. Կոստակով 100 ֆրանք, Աշոտ Մանուէլ 25 ֆր., Սարգիս Սիմօն 20 ֆր.:

Դետափէն՝ Գագիկ խ.-էն երկու ամսավճար 11 լեւ:

ՄԱԿԷԹՕՆ Կոմիտէէն՝ Հայուհեաց Շաբէ ընկերութեան ամսավճարները 377 ֆրանք 50 սանթիմ, նոյն ընկերութեան միջոցաւ կատարուած վիճակահանութենէն 1,000 ֆր., Արեւելեան խ.-ի սեպտեմբեր -- դեկտեմբեր 1897-ի ամսավճարները 165 ֆր. 30 ս., նոյն խ.-ի նէր վիճակահանութենէ 10 ֆր. 40 ս., Բաբկէն Սիմոն խ.-ի յուլիս -- դեկտեմբեր 1897-ի ամսավճարները 99 ֆր., Դրասիրաց եղբայրութենէն նէր 9 ֆր. 25 ս., խաղի տուգանքէ 16 ֆր. 75 ս., պատկերներու վաճառումէ 20 ֆր., Առիւծ (Ծ.) 6 ֆր.: Համագումար 1,704 ֆրանք 20 սանթիմ:

ԿԻՊՐՈՍԻ Ք. Քղ.-ի Կոմիտէն՝

Փետրուար ամսու մուտք. Հէրքիւլ, Մէնսաթ, Բարեսէր, Արա, մէյմէկ շիլլին. Քալիպսօ, Պետ, Աւօ, Վարազ, Քէնեա կէս-կէս շիլլին: Համագումար 6 ու կէս շիլլին:

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ Կոմիտէն՝

1897 սեպտեմբեր, հոկտեմբեր եւ նոյեմբեր ամիսներու մուտք. Կօզան բէյ 90 դահեկան, եւս նէր 100 ղ., Մեղու 90 ղ., Անաստ. Մուղալեան 80 ղ., Ց. Ազիզ, Հայ Գրիգորեան, Պոլսեցի, Դեաւուր Օղլու 60-ական ղ., Գանձանակէն 56 ղ., Առիւծ 36 ղ., Ցէրտէոս, Ց. Մ., Սրմ. Վարդ, Գիւզէլ, Միութիւնը փրկութիւն է, Տիկին Մայր Հայաստան, Տիկին Շուշանիկ, Յոյս, Եր. Դերօ 30-ական ղ., Աշոտ 25 ղ., Ց. Ղազ. 24 ղ., Սրտոտ, Ցոլակ, Շ. Գ., Քէշիշեան, Կենդանացաւ, Անայտ, Դայլ, Հուր 20-ական ղ., Քաջ Մ. 15 ղ., Խորենացի, Սիմոն Զ., Իցահթամաս, Ա. Հ., Տիտան, Գ. Վազը 10-ական ղ., Ցատուր, Պ. Շիրինեան, Մ. Ազիզ 5-ական ղ.: Համագումար 1,261 դահեկան:

ՄՕԼԷԿԻԻԼ Կոմիտէն՝

1897 դեկտեմբեր 28 -- 1898 մարտ 19-ը հաւաքուած ամսավճարներ 96 մարկ:

ՓԱՐԻԶԻ Կոմիտէն՝

Մժեղ 25 ֆրանք, Պիծակ, Համլէթ, Բաբկէն, Գալբաք մէյմէկ ֆր., Մեղու, Նարին, Վրէժ, Խումբ, Նէր 50-ական սանթիմ: Համագումար 31 ֆր. 50 ս.:

ԼՈՅՍ ՑԵՍԱՒ

Վարդգէս. ա.) Homo homini lupus (*Մարդը մարդուն գայլ*). Զրոյցք բ.) ՔՐՔԻԶՆԵՐ (*Արեւելեան ազատ բանաստեղծութիւն*):

Հ. Յ. Դաշնակցութեան Կոմիտէ չեղած տեղերից՝ դիմել խմբագրութեան:

Խմբագրութեանս դիմել հետեւեալ հասցէով՝
Rédaction du **Droschak**, Genève (Suisse)